Պետրոս Դուրյան

Կույսն լքյալ

Հալեց սառեր գարնան արև,
Ոսկի մատամբք ծաղիկ, տերև
Ցանեց, ցրվեց ամպ ու բալ փույթ,
Պարզեց աստեղց կամարն կապույտ.
Ո՛հ, ինչո՞ւ կույսին
Նայվածքն է մրթին:

Ոսկի սփռեց լերանցն արփի,
Ծիծաղեցավ լուսինն յալի,
Կա՛յծ ու ծիծաղ, ծաղիկք համբուն,
Թերթեր, ուր սեր կարդա զվարթուն .
Ո՛հ, ինչո՞ւ գունատ
Է կույսին ճակատ:

Բուլբուլն թառեր թավուտ թփին՝
Գեղգեղե գե՛լ աղիոք սրտին .
Թռչունք մրթին անտառաց խոր
Ձայնակցին, հեշտ սիրո ժըխոր . . .
Ո՛հ, ինչո՞ւ լինի
Լուռ կույս լեզվանի:

Ալիք սիրո ցույց տան կայծ, նետ,
Մրմունջ, նայվածք տանելով հետ,

Զըրել կերթան ծաղկոտ մարմանդ,
Թոթվե խոտեն հովն աղամանդ .
Ո՛հ, ինչո՞ւ արտսուք
Թափե կույսն ի սուգ:

Ի դրանց ոսկի արևելքին՝
Թոչտելով սյուքեր հեշտին՝
Ծաղկանց, ալյաց, թերթից համբույր
Տալով՝ սահին թողլով համ, բույր .
Ո՛հ, ինչո՞ւ հառաչ
Հանե կույսին լանջ:

Ո՛հ, կույս, ինչո՞ւ այսպես տրտում
Սամույր հոպոպքդ արտասվաթուրմ
Դեմքըդ սիրուն ծածկեն, վերցո՛ւր
Ճակատդ, շնչե սեր, լույս ու բույր.
Անկողինդ ծաղկունք,
Աստղեր քեզի շուք:

- Սիրեի ես աստղերն երկնի,
Ալին զիս ցույց տար գեղանի,
Վայլեր ծաղիկ ճակտիս անսուգ,
Զեփյուռն ուներ հեշտ փըսփըսուք.
Մատնելու զկուսիկ
«Հրապո՛ւյրք խաբուսիկ»:

1870